իրանց իշխանութիւնից ու փառքից եւ չը նայելով իրանց աստուածային ծագման, ցանկացել են բուդդհիստ վանական դառնալ: Բուդդհիզմը իր նախնական մաքուր ձեւովը չէր, որ մտաւ Ճապոն, այլ ենթարկւած չինական ու կորէական գիտնականների մեկնութիւններին: Յայտնի է, որ բուդդհիզմը մեծ ճկունութիւն ունի եւ ընդունակութիւն տեղական բարքերին ու պայմաններին յարմարւելու: Ճապոնումն էլ նա, ի հարկէ, նոր փոփոխութիւններ է կրում եւ իւրացնում է տեղական շինտօ կրօնից շատ գծեր եւ նոյն իսկ նրա աստուածները:

Ճապոնի բուդդհիստ բազմաթիւ աղանդները անվերջ վիճում են աստուածաբանական նրբութիւնների մասին: Նրանց վարդապետութիւններն ու տարբերութիւնները ընդհանրապէս շատ դժւար են հասկացւում, գուցէ այն պատճառով, որ նրանց կարծիքով բարձրագոյն ճշմարտութիւնները մատչելի են միայն սրբութեան գերագոյն աստիճանին հասնողների համար:

Բուդդհիստները բացասաբար են վերաբերւում կեանքին: Կեանքը ինքնին մի չարիք է, եւ այդ չարիքը առաջանում է մեր կրքերից ու տգիտութիւնից: Փրկւելու համար պէտք է թափ տանք մեզանից զգայարանքների շղթան եւ ճանաչենք գոյութեան ունայնութիւնը, ուրիշ խօսքերով՝ դառնանք «բուդդհա», որ ասել է «զարթնած»:

Այդ «բուդդհա» վիճակին, այսինքն աստուածութեանը կարող է հասնել ամեն մարդ, եթէ իր հոգու մի քանի մարմնափոխութիւնների ընթացքում արդար կեանք վարի եւ ծանր, ծանր քայլերով առաջ շարժւի սրբութեան ճամփով:

Բուդդհիստ տաճարների պատին յաճախ նկարւած են լինում երեք սրբազան կապիկներ: Դրանցից մէկը իր թաթով